ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գեո-Նալ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/54 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Paxman cooling system	Paxman Coolers Ltd	Գլխամաշկի սառեցման համակարգ, որը նախատեսված է բժշկական կիրառության համար և կապահովի կայուն, վերահսկվող ջերմաստիճան և սառեցնող հեղուկի անընդհատ շրջանառություն: Սառեցնող հեղուկի շրջանառությունը գլխարկի ներսում կապահովի բուժառուի գլխամաշկից ջերմության արդյունավետ հեռացում: Սարքը հնարավորություն կունենա սպասարկել միաժամանակ երկու բուժառուի տարբեր ծրագրերով: Սառեցման միավորի քաշը՝ 44 կգ: Սառեցնող գլխարկների քաշը՝ 900 գ (ներառյալ սառեցնող հեղուկը և ծածկը): Էլեկտրասնուցում. Սնուցման լարում՝ 220–240 Վ, հաճախականություն՝ 50/60 Հց, Ֆազա՝ միաֆազ, սպառվող հզորություն՝ 850 VA, սարքը կունենա հողանցում և պաշտպանված կլինի ապահովիչներով: Աշխատանքային ջերմաստիճանային տիրույթ՝ 10–30 °C տիրությում: Մթնոլորտային ճնշման տիրույթ ՝ 70–106 կՊա: Ջերմաստիճանի կառավարում. էլեկտրոնային ջերմաստիճանային կարգավորիչ՝ սենսորային էկրանով, սառեցնող հեղուկի հոսքի արագության և ջերմաստիճանի մշտական մոնիթորինգ:

			Ահազանգման և վերահսկման համակարգ . տեսողական և ձայնային ահազանգեր՝ բարձր և ցածր ջերմաստիճանի դեպքում, ահազանգ սառեցնող հեղուկի հոսքի կորստի դեպքում: Սառեցնող հեղուկի պարամետրեր. մուտքային ճնշում (գլխարկում)՝ 17 psi, սառեցնող հեղուկի հոսքի արագությունը՝ 10-50 մլ/վ տիրույթում: Սառեցման համակարգ. հերմետիկ փակ սառեցման միավոր, սառեցնող գազ՝ R134A, CFC-ազատ: Սառեցնող հեղուկը՝ ոչ վտանգավոր երկրորդային սառեցնող հեղուկ: Համապատասխանություն և սերտիֆիկացում. 1. ISO 13485:2016 2. EU MDR 3. MDSAP 4. Սարքի դաս՝ Class IIa: Էլեկտրական դասակարգում՝ Class I, Type BF անվտանգության մակարդակ: Սարքը նոր է և չօգտագործված, կտրամադրվի երկու տարվա երաշխիք, ետերաշխիքային սպասարկման հնարավորություն սերտիֆիկացված մասնագետների կողմից: Սարքի հետ կտրամադրվեն 4 տարբեր չափսերի գլխարկներ, գլխարկը ունի ներկառուցված կամ գծային ջերմաստիճանային սենսորներ՝ գլխամաշկի ողջ մակերեսով հավասար և կայուն ջերմաստիճան պահպանելու նպատակով: Գլխարկը ունի ջերմամեկուսիչ ծածկ՝ նեոպրեն նյութից, որը պաշտպանում է արտաքին բարձր ջերմաստիճանից, կլանում է խտացումից առաջացած խոնավությունը: Գլխարկի ամրացման և կարգավորման համակարգը ապահովում է սերտ և հարմարավետ հարմարեցում պացիենտի գլխամաշկին էլաստիկ ձգապարանի միջոցով: Գլխարկը միանում է գլխամաշկի սառեցման համակարգին արագ միացվող/անջատվող, արտահոսքը կանխող պլաստիկ միակցիչներով: Գլխարկները լիովին համատեղելի են առաջարկվող սառեցման համակարգի հետ: Սարքը լիցքավորված է լինելու սառեցվող հեղուկով, լրակազմը ներառում է հավելյալ 1 լ սառեցնող հեղուկ: Սարքի հետ կտրամադրվեն բոլոր անհրեժեշտ պարագաները՝ լիարժեք աշխատանքը ապահովելու համար: Սարքի տեղադրումը, գործարկումը և ուսուցումը իրականացվում է մատակարարի կողմից:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Гео-Нал ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱՉ-ԷԱՃԱՊԶԲ-26/54 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	марка	наименование производителя	технические характеристики
1			